

ՀՀ առաջնություն 2015 ,վինդսերֆինգ  
13 - 18 օգոստոս 2015 թ.  
Մրցույթային կանոնադրություն

1. Կանոններ`

Մրցումները անց են կացվում ըստ առաջատային մարզաձևի “ISAF 2010-2015” կանոնների :

2.Տեղեկատվություն

Տեղեկատվությունը մարզիկների համար կփաթցվի հայտարարությունների պաշտոնական ցուցատախտակներին-Սերֆ կենտրոնում և Մոթելի տարածքում:

3.Մրցույթային ծրագիրը

3.1 12-13 օգոստոսի- հայտերի գրանցում

13 օգոստոսի- 11.00 - հանդիսավոր բացում,13.00- առաջին մրցարշավի մեկնարկ

14 - 17 օգոստոս-12.00 -օրվա առաջին մրցարշավի մեկնարկ,18.00- օրվա վերջին

մրցարշավի մեկնարկ

18 օգոստոս-16.00-մրցումների փակման և պարգևատրման արարողություն-

Սերֆ կենտրոնում /Յամաքաբերդ/:

3.2 Մրցումների անցկացման դասերն ու մրցաձևերը

Մրցումները անց են կացվում կոմպլեքսային RACE-SLALOM մրցաձևում,2 դասում, աղջիկների և տղաների միջև առանձին հաշվարկով` առանց տարիքային սահմանափակման:

1.- Practical Concept ` մինչև 9.5 ք.մ

2.- Navigator 300 տղաներ `մինչև 7 ք.մ

3.- Navigator 300 աղջիկներ` մինչև 7 ք.մ

3.3 Մրցարշավների քանակը

Մրցարշավների առավելագույն քանակը 12 ,մրցումները համարվում են կայացած 3 մրցարշավ յուրաքանչյուր մրցաձևում անցկացնելու դեպքում:

1 օրվա անցկացվող մրցարշավների առավելագույն քանակը- 6

4. Մրցարշավների մրցատարածք

4.1 Մրցարշավների մրցատարածքը համաձայն գծագրի հ1, որը հանդիսանում է մրցույթային կանոնամաս :Հնարավոր են մրցատարածքի փոփոխություններ,որի մասին նախորոք կտեղեկացվեն մարզիկները:

4.2 PC & NAVIGATOR Մրցատարածքի 1,2, նշաններն են- դեղին JOBE

լողանշանները,3-րդ և 4-րդը` դեղին,գնդաձև լողանշանները ,Մեկնարկային

լողանշանն է 3 –րդ ,դեղին կլոր կամ JOBE տիպի լողանշանը, ;եզրագծային

լողանշանն է 4 –րդ կարմիր,կլոր լողանշանը; SLALOM-ի 5-րդ նշանն է կարմիր

,կլոր կամ ցանկացած ուրիշ լողանշան,որի փոփոխության մասին նախորոք

կտեղեկացվեն մարզիկները:

4.3 Նշանների շրջանցման հաջորդականությունը`

PC & NAVIGATOR-ի համար մրցատարածքը ընդհանուր է ;RACE -մեկնարկ-1-2-4-1-3- եզրագիծ / և SLALOM – մեկնարկ – 2 –5 -3 - եզրագիծ:Մրցատարածքի բոլոր փոփոխությունների մասին մարզիկները նախորոք կտեղեկացվեն;

4.4 Մեկնարկային գիծ և եզրագիծ համարվում են մրցավարական նավի կայմի կամ դրոշի և դեղին լողանշանների միջև ընկած հատվածը :

5 Մեկնարկային գործընթաց

5.1 Մրցարշավի մեկնարկային գործընթաց /RACE,SLALOM/

Ազդանշան	դրոշակ և ձայնային ազդանշան	Բոպեներ մինչև “Մեկնարկը բաց է” ազդանշանը
“Ուշադրություն”	Կարմիր դրոշը բարձրանում է	2
	Չայնային ազդանշան	
“Զգուշացում”	Կարմիր դրոշը իջնում է,բարձրանում է դեղին դրոշը	1
	Չայնային ազդանշան	
“Նախապատրաստական”	դեղին դրոշը իջնում է	30 վրկ
	ձայնային ազդանշան	
“Մեկնարկը բաց է”	Կանաչ դրոշը բարձրանում է; ձայնային երկար ազդանշան	0

5.3 Մրցարշավի մասնակիցները պետք է մեկնարկեն ոչ ուշ, քան 3 րոպեից “Մեկնարկը բաց է “ ազդանշանը հնչելուց հետո:

5.4 Եզրագիծը պետք է հատվի ոչ ուշ, քան 10 րոպե տվյալ խմբի եզրագիծը առաջինը հատողից հետո:

5.5 Որևէ մարզիկի կողմից ֆալշ ստարտի դեպքում կանաչ դրոշի հետ կբարձրացվի սև դրոշ և այն կիջեցվի, եթե մարզիկը վերադառնա մեկնարկի:

5.6 Ընդհանուր ֆալշ ստարտի դեպքում մարզիկները ետ են կանչվում ձայնային հատվող ազդանշանով,միաժամանակ բարձրացնելով կարմիր և սև դրոշները:

5.7 Ընդհանուր ափ կանչելու դրոշը` NOVEMBER, կբարձրացվի մրցավարական նավի վրա անհրաժեշտության դեպքում` երկար ընդհատվող ձայնային ազդանշանով:

## 6.Բողոքարկում և արդյունքը ուղղելու պահանջարկ

6.0 Եզրագծի մոտ հայտարարելով բողոքարկ` մասնակիցը անմիջապես պետք է մոտենա մրցավարական նավին և հաղորդի քարտուղարին բողոքարկվող մարզիկի համարը :Այս պահանջարկը չկատարելու դեպքում բողոքարկը համարվում է անվավեր:Բողոքարկը ( արդյունքները վերանայելու պահանջարկ) պետք է գրվի ձևաթղթի վրա,մրցավարական սենյակում և պետք է տրվի գլխավոր քարտուղարին 1 ժամվա ընթացքում վերջին մարզիկի եզրագիծը հատելուց հետո: Բողոքարկված մարզիկների ցուցակը կփաթցվի հայտարարությունների տախտակին:

## 6.1 Արդյունքների հաշվառման սահմանակարգ

Միավորների հաշվառման կլասիկ մեթոդ կամ համաձայն “ISAF 2010-2015” կանոնների B8.3 կցագրի:

4 մրցարշավ անցկացնելու դեպքում հաշվի են առնվում բոլոր մրցարշավների արդյունքները

5-7 մրցարշավի դեպքում ` բացառվում է 1 վատագույն արդյունքը,  
8-10 մրցարշավի դեպքում` բացառվում է 2 վատագույն արդյունքը,  
11-12 մրցարշավների դեպքում բացառվում է 3 վատագույն արդյունքը:

## 7 Անվտանգություն

7.1 Մրցումների Կազմակերպիչներն և մրցավարական կազմը պատասխանատվություն չի կրում մրցումների մասնակիցների կյանքի ու սեփականության համար, ինչպես նաև հնարավոր մարմնական վնասվածքների ու ունեցվածքի կորստի համար` մրցումների ամբողջ ընթացքում: Յուրաքանչյուր մարզիկ մասնակցում է մրցարշավին դիմելով իր անձնական ռիսկին:

Մրցարշավի ժամանակ NAVIGATOR դասի մարզիկը պարտավոր է ունենալ փրկագոտի (տրապեցիա):

Այս կետը խախտելու դեպքում մարզիկը կարող է որակագրկվել:

## 7.2 Ջուր դուրս գալու և ջրից դուրս գալու մասին ստորագրություն

Յուրաքանչյուր մասնակից պարտավոր է ստորագրել ջուր դուրս գալու մասին մրցույթային օրվա սկզբում և մրցույթային օրվա վերջում ջրից դուրս գալու մասին ոչ ուշ, քան բողոքարկման հայտերը ընդունելու ժամանակի ավարտը` մրցավարական սենյակում :Այս կետը խախտելու դեպքում մարզիկը ստանում է 2 տուգանային միավոր` այդ օրվա բոլոր մրցարշավների համար:

## 7.3 Արդարացում

Յուրաքանչյուր մարզիկ կանոնները խախտելուց կարող է արդարանալ մինչ եզրագծի հատումը մրցավարական նավի մոտ կատարելով 360 աստիճան պտույտ ցանկացած ուղղությամբ:

ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ